

## Հովհաննես Թումանյան

*1. Կարդա՛ Հ. Թումանյանի կենսագրությունը և լրացրո՛ւ աղյուսակը:*

| | |
|---|---|
| Երբ և որտեղ է ծնվել | |
| Որտեղ է սովորել | |
| Մի քանի ստեղծագործության վերնագրեր | |
| Այլ տեղեկություններ | |

## «Թմկաբերդի առումը» պոեմը

2. *«Թմկաբերդի առումը» պոեմից դուրս գրի՛ր մի քանի տող, որոնք բնութագրում են՝*

- Թաքուլին

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

- Թմկա տիրուհուն

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

***3. Ո՞ր հերոսին են բնութագրում հետևյալ տողերը: Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:***

*Ի՞նչ սարի արծիվ կըհասնի քաջին,*

*Ի՞նչ շահ կըկանգնի նըրա առաջին:*

- Նադիր շահին
- Թաքուլ իշխանին
- Աշուղին
- Թմկա տիրուհուն

***4. Ներքևում նշված բառերն ու արտահայտությունները տեղադրի՛ր իրենց ճիշտ տեղերում:***

*Անց են կենում ________________________________,*

*Գեղեցկություն, ______________________________,*

*Մահը ______________________, մենք մահինը,*

*Մարդու ____________________ միշտ ______________:*

( գանձ ու գահ, գործն է, սեր ու խնդում, անմահ, մերն է)

5. Լրացրո՛ւ բաց թողնված բառերը :

Հե՜յ, _____________________, ականջ արեք

Թափառական ________________________,

Սիրո՛ւն___________________, ջա՛հել տղերք,

Լա՛վ ուշ դըրեք իմ ______________________:

***(խաղին, պարոններ, տիկնայք,աշուղ)***

*6. ա. Փակագծերում տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում:*

Սիրո ____________________

Կրակ ու __________________

Էնպես________________թե ժպտան,

Մարդու համար օրվա պես վառ

Գիշերները ______________կտան:

Վարդի __________________՝

Էնպես շուրթեր

Թե __________________ քեզ մաղթեն,

Էլ քեզ ո՛չ Ճահ,

Ո՛չ ահ ու մահ,

Ո՛չ__________________ու զորք կհաղթեն:

***(աչքեր, բոց, զենք, լույս, թերթեր, հաղթություն, հնոց)***

*բ. Ո՞մ են նկարագրում այդ տողերը:*

____________________________________________________________

*7. Շարունակի՛ր միտքը՝ փակագծերից ընտրելով ճիշտ բառը:*

- Դարեդար ապրում է միայն մարդու (հագուստը, պաշտոնը, գործը) ___________________:
- Մարդու գործը միշտ (անպետք, անմահ, անհետաքրքիր) ______________ մնում:
- Խոսքըս, տեսեք, ու՞ր է գընում,

  Քաջ որսկանի (փայտի, կացնի, գյուղի) ________________________պես:

## «Փարվանա» բալլադը

*8. Ուշադիր կարդա՛ «Փարվանա» բալլադը և լրացրո՛ւ բաց թողնված արտահայտությունները:*

Հայրը ինչպես ______________________________,

Աղջիկն ___________________________________,

______________________________իրար փարված՝

Դուրս են գալիս միասին:

*9. Ո՞վ կարող է դառնալ արքայադստեր փեսացուն: Գտի՛ր ճիշտ նախադասությունը և տեղադրի՛ր:*

***Նա է ընտրած իմ փեսան:***

____________________________________

- Ով կբերի գանձեր
- Ով կբերի անգին քարեր
- Ով կլինի ամենաուժեղը
- Ով կբերի անշեջ հուրը

*10. Կազմի՛ր նախադասություն* Անշեջ հուր *բառակապակցությամբ:*

__________________________________________________________________

__________________________________________________________________

*11. Ի՞նչ թեմայով է գրված «Փարվանա» բալլադը:*

- հայրենասիրական
- սիրո
- բնության

*12. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է «Փարվանան»:*

- հեքիաթ
- պատմվածք
- բալլադ

*13.Ընտրելով փակագծերից ճիշտ բառը՝ լրացրու միտքը:*

*ա. Կտրիճները փարվանա դստեր սիրուն արժանանալու համար առաջարկում են (փող, հարստություն, ուժ ու շնորհք) ______________________________:*

*բ. Անշեջ հուրը խորհրդանշում է (կրակ, ժառանգություն, սեր) ___________:*

*գ. Կտրիճներն անշեջ հուրը որոնելիս դառնում են (թռչուններ, թիթեռներ, ավազակներ) ______________________:*

*դ. Թագավորի դուստրը կտրիճների առջև դնում է (խաղ, հարց, պայման) ___________________:*



**Ավետիք Իսահակյան**



*1. Լրացրո՛ւ բացթողումները:*

Ավ. Իսահակյանը ծնվել է __________ թվականին, __________ գյուղում: 1889թ. ընդունվում է Էջմիածնի __________________ ճեմարան: 1893թ. մեկնում է արտասահման և ընդունվում Լայպցիգի համալսարան: 1898թ. լույս է տեսնում բանաստեղծի առաջին գիրքը՝ «________________________» վերնագրով: Ավ. Իսահակյանը վախճանվեց __________ թվականին:

Նա գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, ____________________ :

Նրա ստեղծագործություններից են ______________________:

## «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծությունը

*2.Ի՞նչ թեմայով է գրված բանաստեղծությունը:*

- հայրենասիրական
- սիրո
- բնության

*3. Ընտրելով բառերից մեկը՝ կազմի՛ր բառակապակցություն:*

*1.* մրահոն — գարուն / ծաղիկ / աղջիկ

---

*2.* հավերժական — սեր / գիրք / երկինք

---

*3.* միամիտ — տնակ / պատանի / գարուն

---

4. Տրված քառատողից դուրս գրի՛ր համեմատությունները:

Աչքերը սև - արևներ սև
Արևների պես անշեջ
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

---

---

5.Տրված բառերը տեղադրի՛ր քառատողի մեջ:

Մի ____________________ աղջիկ տեսա
Ռիալտոյի ___________________________
Հորդ __________________ գետ գիշերվա
Եվ ________________________ ականջին:

*( հակինթներ, մրահոն, կամուրջին, մազերը )*

*6. Ընդգծի՛ր փոխաբերական իմաստ արտահայտող բառակապակցությունները:*

- հորդ մազեր
- հորդ անձրև
- սև աչքեր
- սև արևներ
- աչքի բոց
- կրակի բոց
- առեղծված ժպիտ
- առեղծվածային պատմություն
- պատանի սիրտ
- մեծ սիրտ

*7. Փոխարինի՛ր ընդգծված բառերը բնագրի բառերով:*

| | |
|---|---|
| ***ա)*** Միամիտ չեմ հավատամ քեզ | ***բ)*** Միամիտ չեմ հավատամ քեզ |
| ***Տանջանքս*** փորձ ունի | ________________ փորձ ունի |
| Մի ***սևաչյա*** կույս էր քեզ պես | Մի _____________ կույս էր քեզ պես |
| ***Փշրեց*** սիրտս պատանի: | _______________ սիրտս պատանի: |

8. Տրված բառերով կազմի՛ր նախադասություններ:

- ծաղկանկար_____________________________________________________

  ________________________________________________________________
- հակինթ ________________________________________________________

  ________________________________________________________________
- մրահոն

  ________________________________________________________________

  ________________________________________________________________

## «Ռավեննայում» բանաստեղծությունը

*9. Ի՞նչ թեմայով է գրված բանաստեղծությունը:*

- հայրենասիրական
- սիրո
- բնության

*10. Ընդգծի՛ր մակդիրները:*

- ծեր կատար
- ծեր մարդ
- լույս գագաթ
- լուսավոր սենյակ
- սեգ ճակատ
- սեգ տղա
- մահախունճապ սերունդ

*11. Գտի՛ր տրված բառերի բացատրությունները և դրանցով կազմի՛ր նախադասություններ:*

աղամանդ ____________________________________________
սեգ ________________________________________________
մահախունճապ ________________________________________

(մահից վախեցած, թանկարժեք քար, հպարտ )

____________________________________________________________

____________________________________________________________

____________________________________________________________

____________________________________________________________

*12. Համեմատի՛ր գրված տողերը բանաստեղծության հետ և ընդգծված բառերը փոխարինիր ճիշտ տարբերակով:*

| | |
|---|---|
| ***Մասիս սարի*** ծեր գագաթին | __________________ ծեր ____________ |
| Դար է եկել վայրկյանի ***նման*** | Դար է եկել վայրկյանի ___________ |
| Ու անցել: | Ու անցել: |
| Անհուն թվով կայծակների | Անհուն թվով կայծակների |
| ***Թուրն է հատվել*** ադամանդին | __________ է __________ ադամանդին |
| Ու անցել: | Ու անցել: |

*13. Կետերի փոխարեն լրացրո՛ւ տրված արտահայտությունները:*

*Արարատի*
- *ծեր կատարին դար է եկել*
- *ադամանդին----------------*
- *լույս գագաթին---------------*
- *սեզ ճակատին---------------*

*ու անցել*

*( սուրն է բեկվել, աչքն է դիպել, դու ես նայել )*



## «Հավերժական սերը» բալլադը

*14. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է:*

- հեքիաթ
- պատմվածք
- բալլադ
- առասպել

*15. Բնագրից լրացրու բաց թողնված բառերը:*

«Բարձր են ________________ ջեղունները, նայելի՛ս,

Բայց իմ ________________ բարձրաբերձ է նրանից,

Խոր են երկրի ________________, նայելի՛ս,

Բայց իմ սերը ________________ է նրանից»։

*16.Կազմի՛ր նախադասություններ շատրվաններ, հեծկլտալ և նազելի բառերով:*

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________

________________________________________________________________:

## «Սաադիի վերջին գարունը» արձակ դոեմը

*17. Փակագծերից ընտրի՛ր ճիշտ բառը և լրացրո՛ւ միտքը:*

- Սաադին նայեց (դալուկ, Շիրազի, ծմերուկի)------------------------------դաշտերին:
- Սաադին նախազգաց, որ ինքն ապրում է իր վերջին (պահը, շաբաթը, գարունը) -----------------------------:
- Սաադին դալուկ ժպիտով նայում էր (մեքենային, Նազիաթին) ----------------------:



**Վահան Տերյան**

1. *Լրացրո՛ւ բացթողումները:*

Վահան Տերյանը (Վահան Սուքիասի Տեր-Գրիգորյան) ծնվել է _________ թվականին Ախալքալաքի _______________ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի _______________ գյուղում, հետո՝ Թիֆլիսում:

1899-1906թթ. բանաստեղծը սովորել է Մոսկվայի ___________________ ճեմարանում, որից հետո՝ Մոսկվայի համալսարանում: Տերյանը մահացել է ________ թվականին, հեռավոր _______________ քաղաքում:

Վ. Տերյանը գրել է բանաստեղծական շարքեր, որոնցից են՝ «Երկիր Նաիրի», ________________________________________________________:

**« Երկիր Նաիրի » շարքը**

*2. Գրի՛ր «Երկիր Նաիրի» շարքից մի քանի բանաստեղծությունների վերնագրեր:*

Օր՝. « Հայրենիքում իմ արնաներկ»,

______________________________________

______________________________________

______________________________________

______________________________________

## «Միթե վերջին դռեսն եմ ես»

*3. Կետադրի՛ր քառատողը և ընդգծված բառերով կազմի՛ր նախադասություններ:*

Միթե վերջին ***պոետն*** եմ ես
Վերջին երգիչն իմ երկրի
Մահն է արդյոք թե նինջը քեզ
***Պատել*** պայծառ ***Նաիրի***:

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

*4. Դասավորի՛ր խառը գրված քառատողը՝ բնագրին համապատասխան:*

Արքայական քո լեզուն
Վտարանդի, երկրում աղոտ
Եվ հնչում է, որպես աղոթք
Լուսեղ, քեզ եմ երազում

______________________________

______________________________

______________________________

______________________________

*5. Գծիկներով միացրո՛ւ իմաստով իրար մոտ բառերը, ապա դրանք տեղադրի՛ր քառատողում:*

| | |
|---|---|
| **պայծառ** | **վառել** |
| **այրել** | **հուրե** |
| **բոցե** | **լուսե** |

| | |
|---|---|
| Հնչում է միշտ խոր ու ***լուսե,*** | Հնչում է միշտ խոր ու ___________, |
| Եվ խոցում է, և ***այրում***. | Եվ խոցում է, և ________________. |
| Արդյոք ***հրե*** վարդերդ են վառ, | Արդյոք _________ վարդերդ են վառ, |
| Թե վերքերն իմ հրահրուն: | Թե վերքերն իմ հրահրուն: |

*6. Լրացրո՛ւ բաց թողնված բառերը:*

*Ահով _______________ կանչում եմ քեզ՝*

*Կոլա՛, ____________ Նաիրի.-*

*մի՞ թե ___________ պոետն եմ ես,*

*վերջին եր· ինչն __________ երկրի…*

*7. ա . Ըստ օրինակի՝ սլաքներով միացրո՛ւ 1-ին և 2-րդ սյունակների հոմանիշները:*

*բ. Սլաքներով միացրո՛ւ 2-րդ և 3-րդ սյունակների բառերն այնպես, որ ստացվի բառակապակցություն:*

| | | |
|---|---|---|
| նինջ | մշուշոտ | երկինք |
| ցնորք | քուն | ճանապարհ |
| պայծառ | տեսիլք | մարդու |
| աղոտ | ջինջ | մանկան |

*6. Կազմի՛ր նախադասություններ վտարանդի, աղոթք, հրահրում բառերով:*

______________________________________________

______________________________________________

______________________________________________

## «Մշուշի միջից տեսիլ դյութական»

*7. Գծիկների փոխարեն տեղադրի՛ր տրված բառերը:*

Որտե՞ղ — են քարերն / է ______ / է խոցում / է ______ — այնպես — վերամբարձ / վեհ ու պարզ / ______ / վիրավոր

( աղոթքն, չար ու խոր, հոգին )

*8. Գծիկով միացրո՛ւ իրար հոմանիշ բառերը, ապա ընդգծված բառերով կազմի՛ր և գրի՛ր չորս բառակապակցություն:*

| | | |
|---|---|---|
| մշուշ | նորից | 1. ______ |
| քախիծ | դանակ | 2. ______ |
| կրկին | մառախուղ | 3. ______ |
| դաշույն | տխրություն | 4. ______ |

9. Բանաստեղծությունից դուրս գրի՛ր այն տողերը, որտեղ կան *տեսիլ դյութական, անպարտ երկիր, քինոտ դաշույն* մակդիրները

1. ______________________________________
2. ______________________________________
3. ______________________________________

## «Բարակիրան Նաիրուհին...»

*10. Բանաստեղծությունից դուրս գրի՛ր տրված բառերի բոլոր հատկանիշները:*

նաիրուհի — բարակիրան
— ________________
— ________________

նայվածք — ________________
— ________________

*11. Ընդգծված բառերը փոխարինի՛ր բանաստեղծության բառերով:*

| | |
|---|---|
| Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց, | Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց, |
| Նաիրուհին ____________ և համեստ. | Նաիրուհին *սևաչյա* և համեստ. |
| Այնպես վառ էր *իշխանադստեր* դեմքը բաց, | Այնպես վառ էր ____________ դեմքը ____, |
| Նայվածքն այնպես *կրակոտ* ու *վայրի*: | Նայվածքն այնպես __________ու ______: |

*12. Կազմի՛ր նախադասություններ նաիրյան արև և նաիրյան աշխարհ բառակապակցություններով:*

1. ____________________________________________________________

2. ____________________________________________________________

*13. Ո՞վ է նախրուհին:*

- հայուհի
- աշակերտուհի
- զբոսաշրջիկ

*14. Գծիկներով միացրո՛ւ տրված բառերի բացատրությունները (հոմանիշները):*

| | |
|---|---|
| **բարակիրան** | **պարզ** |
| **ցոլալ** | **նիհար** |
| **անբիծ** | **շողալ** |

*15. Բանաստեղծությունից դուրս գրի՛ր մի քանի փոխաբերություններ:*

______________________________

______________________________

______________________________

## «Տխրություն»

*16. Ի՞նչ թեմայով է գրված բանաստեղծությունը:*

- հայրենասիրական
- սիրո
- բնության

*17. Ընդգծի՛ր համեմատությունները:*

Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.
Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով…

*18. Ընդգծված բառերը փոխարինի՛ր բնագրի բառերով և տեղադրի՛ր քառատողում:*

Արձակ դաշտերի <u>դատարկության</u> մեջ նա մեղմ շշնջաց,
<u>Ասես</u> թե սիրո քնքուշ խոսք ասաց <u>քնող</u> դաշտերին.-
Ծաղիկների մեջ այդ <u>երազ</u> կույսի շշուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ <u>հոգին</u> լցրին…

Արձակ դաշտերի ____________________ մեջ նա մեղմ շշնջաց,
_________ թե սիրո քնքուշ խոսք ասաց __________ դաշտերին.-
Ծաղիկների մեջ այդ ___________________ կույսի շշուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ ________________ լցրին…

*19. Յուրաքանչյուր բառ գծիկով միացրո՛ւ իր բացատրությանը:*

| | |
|---|---|
| աննշմար | մեղմ քամի |
| իրիկնաժամ | թռչյուն |
| հով | չերևացող |
| ուրու | երեկո |

*20. Ընտրելով բառերից մեկը՝ գծիկով միացրո՛ւ կամ կազմի՛ր բառակապակցություն:*

| | | |
|---|---|---|
| | քայլեր | |
| սահուն | մթություն | 1.______________________________ |
| | շորեր | |
| | մեքենա | |
| քնքուշ | տետր | 2.______________________________ |
| | խոսք | |
| | նկարներ | |
| արձակ | դաշտեր | 3.______________________________ |
| | մաքրություն | |

***21. Տրված բառերը տեղադրի՛ր տեքստի մեջ:***

*Մի անգամ իրիկնաժամին անցնում էի ____________ դաշտերով: Հանկարծ նկատեցի սրբերի նման ____________ շորերով մի աղջկա, որը ____________ քայլերով անցավ դաշտերի ____________ մեջ: Նա մի ____________ խոսք ասաց դաշտերին ու ծաղիկներին: Իսկ ծաղիկներն այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին:*

( քնքուշ, արձակ, սիրտը, ամայության, ճերմակ, գունատ )



## Միսաք Մեծարենց

***1. Լրացրո՛ւ բաց թողնված բառերը:***

Միսաք ____________ ծնվել է ____________թ. Խարբերդի Բինկյան գյուղում: 1895թ. նրանց ընտանիքը տեղափոխվում է____________ ____________ քաղաքը: Ավարտել է Կ. Պոլսի ____________ վարժարանը: Մեծարենցը հրատարակել է բանաստեղծությունների երկու ժողովածու՝____________ և ____________

Բանաստեղծը մահացել է ____________ տարեկանում:

(Կեդրոնական, Մեծարենց, Սեբաստիա, 22, «Ծիածան», «Նոր տաղեր»)

*2. Ո՞ր ժողովածուն Մեծարենցինը չէ:*

- Ծիածան
- Երգեր ու վերքեր
- Նոր տաղեր

*3. Տեղադրի՛ր համապատասխան բառերը:*

*Ծաղիկներեն հուշիկ ___________ կը թափե*
*Բուրումներով օծուն ____________ իրիկվան,*
*Հոգիներուն կիջնե ___________ մը բուրյան,*
*Ի՜նչ հեշտին է մթնշաղն այս ______________:*

(սատափե, հովիկն, թերթեր, երազ)

*4. Օրվա ո՞ր պահն է նկարագրված բանաստեղծության մեջ:*

- առավոտ
- կեսօր
- երեկո

*5. Ի՞նչ գույն ունեն ակացիայի ծաղիկները:*

- կարմիր
- շագանակագույն
- ճերմակ
- դեղին

*6. Ընդգծի՛ր փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցությունը:*

- երեկոյան հով
- բուրավետ երազ
- բուրավետ ծաղիկ

*7. Ինչի՞ մասին է բանաստեղծությունը:*

- հայրենիքի
- բնության
- բարեկամության
- մոր

*8. Փորձի՛ր նկարել ծաղկած ակացիա:*



**Դանիել Վարուժան**



1. ***Որտե՞ղ է ծնվել Դանիել Վարուժանը:***

- Լոռու Դսեղ գյուղում
- Երևանում
- Սեբաստիայի Բրգնիկ գյուղում
- Խարբերդի Բինկյան գյուղում

## «Զոն» բանաստեղծությունը

*2. Ինչի՞ մասին է Դ. Վարուժանի «Զոն» բանաստեղծությունը:*

- Սիրո
- Պանդխտության
- Հայրենիքի
- Մոր

*3. Տրված բառակապակցությունները տեղադրի՛ր բանաստեղծության հատված-ների մեջ:*

*Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.*
*- Քեզի ընծա, ___________________________ -*
*….*
*Եղեգնյա գրչով երգեցի կարոտ.*
*-Ձեզի ընծա, ____________________________-*
*….*
*Եղեգնյա գրչով երգեցի արյուն.*
*-Ձեզի ընծա, ____________________________-*
*…*
*Եղեգնյա գրչով որբ տունս երգեցի.*
*-Քեզի ընծա, ___________________________-*
*….*
*Ու պայքար, պայքար, պայքար երգեցի.*
*-Ձեզի ընծա, ____________________-*

(հայ մարտիկներ, իմ հայրենիք, հայր ալեհեր, սուրբ զոհեր, հայ պանդուխտներ)

*4. «Ձոն» բանաստեղծության բոլոր տների վերջին տողերը կրկնվում են, սակայն յուրաքանչյուր տողում կա մի բառ, որն ամփոփում է ամբողջ տան միտքը: Դասավորիր այդ բառերը՝ ըստ տների հաջորդականության:*

ծուխ ________________

բոց ________________

լույս ________________

ողբ ________________

սիրտս ________________



**Գրիգոր Զոհրապ**

*1. Ի՞նչ պատվանունով է հայտնի Գրիգոր Զոհրապը:*

- Մեծ լռեցի
- Նորավեպի իշխան
- Վարպետ

*2. Լրացրո՛ւ բացթողումները:*

*Գրիգոր Զոհրապը ծնվել է _________թ. ______________________________ քաղաքում: Սովորել է ______________________________ վարժարաններում, ապա ստացել է բարձրագույն կրթություն՝ ________________ ______________________________ մասնագիտություններով: Հետագայում զբաղվել է ______________________ և ______________________:*

*Հայ ժողովրդի համար աղետալի օրերին Զոհրապը չկամեցավ բաժանվել իր հայրենակիցներից և մեկուկես միլիոն հայերի պես դարձավ __________ թվականի Մեծ եղեռնի զոհը:*

*Գ. Զոհրապը գրել է մոտ քառասուն նովել, որոնք լույս են տեսել երեք ժողովածուներով՝______________________________,________________________, __________________________:*

***3. Ի՞նչ ժանրի ստեղծագործություններ է գրել Գ. Զոհրապը:***

- Պատմավեպ
- Նովել
- Պոեմ
- Պատմվածք

***4. Ի՞նչ է նշանակում այրի:***

- .Ամուսնացած կին
- Ամուսնացած տղամարդ
- Կին, որի ամուսինը մահացել է
- Տղամարդ, որի կինը մահացել է

***5. «Այրին» նովելի ո՞ր հերոսին են բնութագրում հետևյալ տողերը: Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:***

- *«…իր թուխ ու գեղեցիկ դեմքը պատանության փափկությունը կը պահեր առնական դրոշմը առնելով հանդերձ. սևահեր ու սևաչվի էր. քաղցր, վեհերոտ…»:*

  (Մարտիրոս, Խաչո, Զարդար)

- *«Այս գեղի աղջիկը գորովի և սիրո անսպառ գանձեր ուներ սակայն իր սրտին խորը, որոնք մեկ բառով, մեկ զգվանքով թերևս պիտի հայտնվեին»:*

  (Պարտիզակցի սպասուհի, վաճառականի կինը, Զարդար)



## Մուրացան

*1. Կարդա՛ Մուրացանի կենսագրությունը և լրացրո՛ւ աղյուսակը:*

Երբ և որտեղ է ծնվել ____________________

____________________

Իսկական անուն ազգանունը ____________________

____________________

Մի քանի ստեղծագործության վերնագրեր ____________________

____________________

## «Առաքյալը» վիպակը

*2. Ո՞վ է «Առաքյալը» վիպակի գլխավոր հերոսը:*

- Պետրոս Կամսարյանը
- Գևորգ Մարզպետունին
- Աշոտ Երկաթը
- Տիրացու Մոսին

*2. «Նրա աչքերի առաջ բացվեցավ հանկարծ մի բաց կապուտակ դաշտ, որին նա սկզբում հորիզոնը փակող մշուշ կարծեց»: Ի՞նչ տեսարան էր դա, որ հիացրեց* Կամսարյանին*: Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:*

- Չիբուխլուն
- գյուղացիների տները
- Սեմյոնովկան
- Սևանա լիճը

*3. Ինչպե՞ս ավարտվեց պատմվածքը: Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:*

- Կամսարյանը մնաց գյուղում
- Կամսարյանը հեռացավ գյուղից
- Կամսարյանը փրկեց գյուղը
- Կամսարյանը մեկնեց այլ գյուղ

*5. Թվարկի՛ր վիպակի մի քանի հերոսների անունները:*

______________________________________________________________________

______________________________________________________________________



**Շիրվանզադե**

*1. Լրացրո՛ւ բացթողումները:*

Շիրվանզադեն (Ալեքսանդր Մովսիսյան) ծնվել է ____________ թվականին ________________________ քաղաքում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի ____________________ վարժապետի ուսումնարանում, հետո թեմական և ռուսական երկդասյա դպրոցներում: Շուտով նա մեկնում է ____________________ քաղաք, ուր աշխատում է որպես գրագիր: Հետագայում նա շրջագայում է և ապրում արտասահմանում:

Շիրվանզադեն մահացել է 77 տարեկան հասակում _________ թվականին

և թաղված է ______________________________ պանթեոնում:

Նրա ստեղծագործություններից են՝ «Քաոս» վեպը, ____________________

____________________________________________________________:

## «Արտիստը» պատմվածքը

*2. Որտե՞ղ են կատարվում պատմվածքի իրադարձությունները:*

- Երևանում
- Օդեսայում
- Թիֆլիսում

*3. Պատմվածքից դուրս գրի՛ր տանտիրուհուն և Լուիզային բնութագրող բառեր:*

Տանտիրուհին
- իտալուհի էր
- ____________________
- ____________________
- ____________________
- ____________________

Լուիզան
- շիկահեր
- ____________________
- ____________________
- ____________________
- ____________________

*4. Գրի՛ր, թե ում մասին է այս արտահայտությունը և բացատրի՛ր այն:*

Նա ազնիվ է որպես նորածին և զգայուն՝ որպես քնարի լար:

____________________________________________________________

____________________________________________________________

5. *ա. Փակագծերում գրված բառերը տեղադրի՛ր տեքստի մեջ:*

Մոտ 16-17 տարեկան մի __________________ էր, նիհար, գունատ դեմքով, - ________________________ փոքր-ինչ ներս ընկած: Նրա ___________________ գծերը կանոնավոր էին ու նուրբ, ______________________________ ունեին ինչ-որ __________________________ արտահայտություն:

(պատանի, դեմք, մելամաղձիկ, կուրծք, աչքեր)

*բ. Գրի՛ր, թե ով է նկարագրված այս հատվածում:*

________________________________________________________________________

*6. Ի՞նչ ստեղծագործություն էր նվագում Լևոնը մանդոլինայով:*

- « Լուսնի սոնատը »
- « Տարվա եղանակները »
- « Մաղրիդի շրջմոլիկը »

*7. Նշի՛ր «Արտիստը» պատմվածքից մի քանի հերոսների անուններ:*

________________________________________________________________________

________________________________________________________________________

*8.Փակագծերից ընտրի՛ր ճիշտ բառը և լրացրո՛ւ միտքը:*

**ա.** Լևոնը սիրում էր (Լուիզային, օրիորդ Ռախսային, տանտիրուհուն)
_____________________________:

բ. Լևոնը փողերը պահում էր (գրպանում, կոշիկի մեջ, պահարանում)
_____________________________:

գ.Լուիզան ամուսնացավ (ճեղինակի, Կավալլարոյի, Լևոնի)
__________________________ հետ:

*9.**Կազմի՛ր նախադասություններ*** *ջենտլմեն, վոխտ, օրիորդ* ***բառերով:***

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

***10. Շարունակի՛ր միտքը:***

- Լևոնը մահացավ, որովհետև ________________________________________:
- Լևոնին անվանում էին արտրիստ,որովհետև______________________________
______________________________________________________________________:
- Լևոնի մայրը դժգոհում էր տղայից, որովհետև___________________________
______________________________________________________________________:

***11. Ի՞նչ էր անում Լևոնը Միլան գնալու համար: Ներքևում գրի՛ր ամբողջական պատասխանը:***

- մուրացկանություն
- լվացք
- նվագում էր պանդոկում

______________________________________________________________________



**Նար-Դոս**

*1. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանները՝ յուրաքանչյուրի դիմաց գրելով մեկական ստեղծագործության վերնագիր:*

- վեպեր ______________________________
- վիպակներ ______________________________
- բանաստեղծություններ ______________________________
- պատմվածքներ ______________________________
- նովելներ ______________________________
- պոեմներ ______________________________

## «Նեղ օրերից մեկը» պատմվածքը

*2. «Նեղ օրերից մեկը» պատմվածքի ո՞ր հերոսներին են նկարագրում հետևյալ տողերը. ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:*

- *«Նա մի փոքր երիտասարդ էր՝ խիստ բարի աչքերով և անվստահ շարժումներով»:*

  (Դավիթ Ֆոմիչ, քարտուղար, Պատրիկյան)

- *«...մոտ 40-45 տարեկան տղամարդ էր՝ խիստ չղոտ, կարծես բրոնզից ձուլված դեմքով»:*

  (Դավիթ Ֆոմիչ, Զափինյան, Պատրիկյան)

***3. Ի՞նչն է նկարագրված այս հատվածում. ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:***

***«Սենյակը զարդարված էր դահլիճի պես փարթամորեն: Կահավորանքի մեջ աչքի էր ընկնում ոչ այնքան ճաշակը, որքան փափկակեցության թուլությունը: … ուր նայում էր տեսնում էր գորգ ու թավշյա բարձեր»:***

- Պատրիկյանի սենյակը
- Խմբագրատունը
- Տանտիրոջ առանձնասենյակը
- Հրեա կնոջ սենյակը

***4. Ո՞ւմ խոսքերն են: Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:***

- *Ուզում էի գնալ արտասահման ուսումս շարունակելու, դիմեցի մի քանի բարեկամների, մերժում ստացա,* - ասաց
  - Պատրիկյանը
  - Դավիթ Ֆոմիչը
  - տանտիրուհին:

- *Ես էլ հազար ու մի ցավ ու դարդեր ունեմ, նստեմ պատմե՞մ ձեզ,* - *պատասխանեց*
  - Պատրիկյանը
  - Դավիթ Ֆոմիչը
  - տանտիրուհին:

***5. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:***

*- Դու գրո՞ղ ես, - հարցրեց տանտերը՝*
  - զայրացած
  - ուրախացած
  - զարմացած:



## Էռնեստ Հեմինգուեյ

## «Ծերունին եւ ծովը» պատմվածքը

*1. Ինչո՞ւ էր ծերունին ծով գնում:*

- Սիրում էր նայել ջրում լողացող ձկներին
- Ուզում էր հարստանալ
- Առանց ծովի չէր կարող ապրել

*2. Ի՞նչ գույն ունեին ծերունու աչքերը:*

- հողի գույն
- ծովի գույն
- խոտի գույն

*3. Ինչո՞ւ էր աշակերտը հավատում ծերունուն:*

- Ծերունին հաղթել էր ձկանը:
- Ծերունին հաջողակ էր:
- Ծրունին հարուստ էր:

*4. Սյունակներից ընտրի՛ր բառերը, սլաքներով իրար միացրու և ստացիր բառակապակցություններ:*

| | |
|---|---|
| **ալեկոծ** | **ձկնորս** |
| **անխիղճ** | **աշակերտ** |
| **ծեր** | **թշնամի** |
| **հավատարիմ** | **ծով** |